ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-1

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

31.08. 2023թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցում էին գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, Գ. Սիրոյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Թ. Վարդանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, ՈւԳԸ նախագահ Թ. Ջանվելյան, ՈՒԽ-ի նախագահ Ի. Բաղիրյանը, Հ. Սանթրոսյանը: Նիստն անցկացվել է zoom.us հարթակում:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

Օրակարգ

1. Տնտեսագիտություն ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի քննարկման մասին(զեկ. Ա. Մարգարյան):
2. 2023-24 ուստարվա ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերի I կիսամյակի ժամանակացույց- պլանի քննարկման և հաստատման մասին(զեկ. Ա. Մարգարյան):
3. Դեկանատի կազմի ձևավորման մասին(զեկ. Ա. Մարգարյան):
4. 2023- 2024 ուստարվա տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմի քննարկման և հաստատման մասին(զեկ. Ա. Մարգարյան):

Բաց քվեարկությամբ 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում 1/1

- Հաստատել նիստի օրակարգը:

1. Լսեցին.- Տնտեսագիտություն ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի քննարկման մասին(զեկ. Ա. Մարգարյան):

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ գիտական խորհրդում կան փոփոխություններ, որոնք պայմանավորված են ուսանողների ավարտելու հետ, ինչպես նաև արտաքին շահակիցների փոփոխման: Նա նաև նշեց, որ գիտական խորհրդի կազմի ընտրությունը կատարվել է ֆակուլտետի գիտական խորհրդի արդյունավետ աշխատանքի կազմակերպման և կազմակերպմանը միտված: Ա. Մարգարյանը ներկայացրեց գիտական խորհրդի կազմը և առաջարկեց հավանություն տալ.

1. Մարգարյան Ալեքսան Շամիլի-ֆակուլտետի դեկանի ժ/պ, ֆ.մ.գ.թ., Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, խորհրդի նախագահ,

2. Ալեքսանյան Անժելա Գրիտելի-Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, խորհրդի քարտուղար,
3. Հովհաննիսյան Գուրգեն Ժորժիկի-Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ, ա.գ.թ., պրոֆեսոր,
4. Սիրոյան Գարիկ Աշոտի- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի տ.գ.թ.,դոցենտ, Ֆինանսներ ըստ ոլորտի ԿԾ ղեկավար
5. Ասիլբեկյան Պավել Նորիկի-Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, ֆակուլտետի արհեստակցական միության նախագահ,
6. Սարիբեկյան Անուշ Աղաջանի-Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ,
7. Վարդանյան Թրահել Գերասիմի-Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, ա.գ.դ., «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ղեկավար,
8. Պոտոսյան Ակսել Հարությունի-Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, ա.գ.դ.,
9. Ավետիսյան Գայանե Հրաչիկի-Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.,
10. Ուլիխանյան Ալինա Վոլոդյայի-Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ
11. Աֆյան Դիանա Գրիշայի- ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի Մակրոտնտեսական դեպարտամենտի Վիճակագրության վարչության Ընտրանքային հետազոտությունների և վերլուծությունների բաժնի ղեկավար, տ.գ.թ.ասիստենտ
12. Մուրադյան Արթուր Կարենի -Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի տ.գ.թ. ասիստենտ,
13. Ջանվելյան Թինա-«Ֆինանսներ /ըստ ոլորտի» կրթական ծրագրի III կուրսի ուսանողուհի, ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ,
14. Բաղիրյան Իդա-«Ֆինանսներ /ըստ ոլորտի» կրթական ծրագրի IV կուրսի ուսանողուհի, ֆակուլտետի ՈՒԽ նախագահ,
15. Մնացականյան Լուսինե Արտյոմի-«Զբոսաշրջություն» /հեռակա/ կրթական ծրագրի III կուրսի ուսանողուհի,
16. Սանթրոսյան Հերմինե Արտակի-«Զբոսաշրջություն» կրթական ծրագրի IV կուրսի ուսանողուհի:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.18 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. – Հավանություն տալ և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

2. ***Լսեցին.- 2023-24 ուստարվա ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերի I կիսամյակի ժամանակացույց- պլանի քննարկման և հաստատման մասին(զեկ. Ա. Մարգարյան):***

Ա. Մարգարյանը ներկայացրեց 2023-24 ուստարվա ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերի I կիսամյակի ժամանակացույց- պլան, որն իրենից ներկայացնում է առաջին կիսամյակում նախատեսված աշխատանքները(ժամակացույց- պլանը կցվում է):

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հավանություն տալ 2023-24 ուստարվա ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերի I կիսամյակի ժամանակացույց- պլանը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

3. ***Լսեցին.- Դեկանատի կազմի ձևավորման մասին(զեկ. Ա. Մարգարյան):***

Ա. Մարգարյանը ներկայացրեց դեկանատի կազմը և առաջարկեց քննարկել և հաստատել.

1. Ա. Մարգարյան	դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ,
2. Ա Ալեքսանյան	«Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի ասիստենտ, խորհրդի քարտուղար,
3.Գ. Սիրոյան	«Ընդհանուր տնտեսագիտություն» ամբիոնի վարիչ, Ֆինանսներ ըստ ոլոտի ԿԾղեկավար
4. Գ. Հովհաննիսյան	«Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչ,
5. Պ. Ասիլբեկյան	ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ,
6. Թ. Ջանվելյան	ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ,
7.Ի. Բադիրյան	ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ

Միաձայն կողմ քվեարկելով՝ գիտախորհրդի կազմը հավանության արժանացրեց և հաստատեց դեկանատի կազմը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.18 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. – Հաստատել ֆակուլտետի գիտխորհրդի նախագահի կողմից ներկայացված դեկանատի կազմը:

4. ***Լսեցին.- 2023- 2024 ուստարվա տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմի քննարկման և հաստատման մասին(զեկ. Ա. Մարգարյան):***

Ա. Մարգարյանը նշեց, որ մանդատային հանձնաժողովի ձևավորման համար հիմք են ընդունվել «ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման» կանոնակարգի /10 կետ/ պահանջները: Նա ներկայացրեց 2023-2024 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովը հետևյալ կազմով.

1. Ա. Մարգարյան դեկան, մանդատային հանձնաժողովի նախագահ,
2. Պ. Ասիլբեկյան ֆակուլտետի արհմիության նախագահ, մանդատային հանձնաժողովի քարտուղար,
3. Ա. Սարիբեկյան Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ,
4. Թ. Ջանվելյան ֆակուլտետի ՈՒՍ նախագահ,
5. Ի Բադիրյան ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ,

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.18 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հավանության արժանացնել 2023-2024 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի անդամների թեկնածությունները և կազմը ներկայացնել տնօրենի հաստատմանը:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ա. Մարգարյան

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան